



10. ՔԱՐՔԱՎԻՁ

Կեղի իրեք ախպեր ու իրեք կնիկ:

Էտ երկու կնիկ սիրող կենն. էտ մեկ կնիկ ձեռնեն չ'էլնե սիրող էնե: Քառսուն արաքի խոր կը փորին, գետ մեկ կնիկ կը թալեն մըջ խորուն:

Էտ իրիկ կըսե. - Դու իմ կնիկն եղիս, դու քո ցավ ընծի չըսես:

Իրիկ կը խռովի կնկնից. կէլի կընկնի ճանապար: Խատուկ ջորի մը էտատեղ կա, բոլոր անծեղ կա, կը թափի վերեն, կուտա ջորու ջանդակ:

Էդ մարթ կը մտի էտ ջորու դաֆաս, անծեղ մի կը բռնա, կը դնա ուր ծոց, կէրթա էդ մարդ կէրթա դռա մի դախիլ կէղնի:

Էտ կընկան կըսե. - Տեղ մի տուր պառկիմ, սաքախտան կէլիմ կ'էրթամ:

Կըսե. - Կարած պատանք, քառսունխինգ տարի իմ իրիկ կուրբաթն ա, ործ կատու իմ դմնովն ընցե՞ր ա, օր դու գաս մտնիս իմ տուն:

Էտ մարթ զինք գողնա, կէրթա պառկի կնկա մտուր, կնիկ խաբար չունի էդ մարթուց:

Սիւնք իրեք կէղնի, էտ կնկան սիրող կիգա, դուռ կը տփա, կըսե. - Դուռ բա՛ց, իգամ ներս:

Էտ մարթու բոխչեն կնիկ կառնի կը դնա փեթկի գլոխ, գետ մարթ կը մտու թունդիր: Սիւնք կ'էղի չորս, սիրողմ՝ լե կիգա դուռ, էտ մարթու բոխչեն կը դնա փեթկի գլոխ, գետ մարթու գլոխ կը դնա գետին, զօտքեր կը տնկա, կէնա ճրախկալ:

Իմ ախպոր մեռնիմ, սիւնք խնգին, մեկ էլ կիգա: Էտ մարթու բոխչեն կը դնա գետին, գետ մարթ կը փաթթա խսիլ, կանեցուցա դռան հետեւ:

Սհաթ վեցին՝ մեկ էլ կիգա: Սհաթ յոթնին՝ մեկ էլ կիգա: Սհաթ ութին՝ մեկ էլ կիգա: Սհաթ իննին՝ մեկ էլ կիգա: Կնիկ դուռ կը շինա, կիգա խըտ էտ մարթ-կաց քեֆ կենե:

Կը տեսնե օր էտ քառասունխինգ տարեկան կուրքաթ իրիկ էկավ, դուռ չալեց: Ըսեց. - Վոլա՛, խա՛յ, էնա քառասունխինգ տարի դու գացեր ես, նա՛ իմ ճրագ վառվեր է, նա՛ իմ թունդիր:

Ճրագ կպուց, նստավ. դողուն առավ կնիկ. - Է՛յ, Աստված, - ըսավ, - ես էս յոթ մարթ ի՞նչպես եցկիմ դուս:

Էն մարթն օր անձեղ ծոցն էր, էլավ էկավ, ըսեց. - Աղբեր, բարի օրն ի վրեղ, տեղ մի տուր կը ծծկիմ:

Ըսեց. - Արի նստի իմ խեչ, ես էլ շատ ախքատութիւն քաշեր իմ, կուրքաթ էղեր իմ:

Էտ կնիկ ըսեց. - Կարած պատանք, էլի ընկի դուս, իմ իրիկն* քառասունխինգ տարի կուրքաթն էր, հեսօր էկեր է, պառկինք, գէլինք:

Իրիկ ըսավ. - Թը նստի իմ խեչ, թըղ չէրթա:

Ըսեց. - Կնիկ, կանա՞ս փշու մի հաց բերես ուտինք, ես ու էտ աղքատ մարթ, օր էղեր է մզի կոնախ:

Ըսեց. - Քառասունխինգ տարվան թթուն հանդե թոնիրն է, քառասուն տարվան կտներ հանդե դրուկ է, էլնիմ բերիմ կեր: Ես քո հետև խաց էլ չկալեր իմ:

Էլավ էտ մարթ հուշիկ գուր ընթի տակ ճխթեց, անձեղն էրաց՝ վըշղ:

Ըսավ. - Ի՞նչ կըսե:

Ըսավ. - Կըսե՛ բոխչե մի կա էնա փեթկի գլոխ, բեր ուտենք:

Ըսավ. - Կնիկ, ել էտ բոխչեն բեր ուտինք:

Էլավ բոխչեն բերեց՝ կերան, խմեցին:

Էտ մարթ մեկ էլ անձեղ ճխթեց, ըսավ. - Բոխչեմ՝ էլ կա հոնի:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Բոխչեմ՝ էլ կա հոնի:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Բոխչեմ՝ էլ կա հոնի, գէն էլ բեր:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Մեկմ՝ էլ կա հոնի:

Յոթ բոխչեն թըմավ:

Էտ մրթ մեկ էլ անձեղ ճխթեց, էրաց՝ վը՛ղղ:

Ըսավ. - Ախպեր ջան, մարթ մի կա հողա: Էդ ճրախկալ վերու, տկին ի՞նչ է:

Մեկ էլ ճխթեց՝ մեկ մարթ էլ գտավ, բերեց:

* Բնագրում՝ *կնիկ*, հավանաբար բանահավաքի կողմից վրիպել է (ծ.կ.):

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Մարթ մի թունդիրն է:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Մարթ մի փաթթուկ խսիլ, դռան հետեւին է:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Հանդե՛ ական մարթ:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Հանդե՛ փեթակն է:

Մեկ էլ ճխթեց, ըսեց. - Հանդե՛ քո հետեւին է:

Էփե յոթ մարթն էլ եղիր գետին, մորթեց, զկնիկ մորթեց, էրեց ութ մարթ:

- Ը՛, - ըսավ, - ի՞նչպես էտ ութ մարթ խորիմ:

Ըսավ. - Գնա քու քավորին ըսե թ՛իզա տանի խորե:

Էլնով գնաց սամախոր դուռ, ըսեց.

- Սամախեր, քու քավորկին սանջու բռներ, մեռեր է, - արի տար խորի:

Էկավ շալկեց, զըտոնց մեռելներ կը թալեն ծով:

Թալեց ծով, էկավ:

Ըսեց. - Քավո՛ր, դու ի՞նչալ կը տանես թալես ծով, չուր դու էկար, մեռել քզնե հառեջ էկավ:

Չուր տարավ, էկավ ջանդակմ՛ էլ բերեց:

Ըսեց. - Դու կը տանես թալես ծով, ծովեն կը փախի կիզա. հանդե պառկավ թունդորա պռուկ:

Մեկ էլ շալկեց տարավ: Չուր տարավ, էկավ թորվան շուրթ: Չուր եղ էլ տարավ էկավ, մեկ էլ էկավ թորվան շուրթ: Մեկ էլ էկավ դրվավ թորվան շուրթ:

Էտ մարթ էտ հետին ջանդակ օր կը թալե ծով, կը տեսնի էտտեղ մուլե մի լմեժ կենե: Էտ ջանդակ օր պըրթավ ջուր, դե մուլա դու խրտի ու փախի ծովափեն:

Ըսեց. - Ք...մ քու գանկ, մեղ մի դնի հայուն, կըսե կսաղնա կիզա. կեցի փետ մի զարկիմ՝ փիծոււմ:

Փետ մի զարկեց մուլի պուճուճակ, փիծավ, օտներ բռնեց տարավ թալեց ծով:

- Տո՛ ախպեր, - ըսեց, - դու կըսիր, ես չավտեր, կիշկեն, - ըսեց, - գո էլի ծովափան խետ ու կը փախնի. նոր փետ մի զարկեր իմ, սպաներ իմ՝ թալեր ծով, էկեր իմ:

Ըսավ. - Ախպեր ջան, էտ ի՞նչ է քու ծոց: Ըտոր լեզուն ընծի սովորու, քզի խուրջին մի օսկի կիտամ:

Էլավ զէտ խավք ծոցեն խանեց, թալեց փեթակ:

Էտ փեթկի մեջ բարուշ մի եռցուկ ջուր թափեց՝ խավք էրեցավ, կապվ փեթկի կող: Էնի բերան բացի տվի փեթկի ծոցի դեմ, որ խավք գա լեզուն դնե ուր բերան, սորվի լեզուն:

Էտ մարթ առավ գխուրջին օսկին, գնաց:

Տարավ իրեք օսկի ետուր էշմ՝ առավ, անուն՝ Քարքավիզ: «Չո՛ւ, չո՛ւ, Քարքավիզ», - ըսեց, ելավ գնաց Սղերդ:

Քարքավիզ տեսավ օր Էտ մախլուխ ըմեն խարորներն արցկին, փախան գեղ:

Տեսավ, գացին ռեսին ըսին. - Մարթ մի էկե, անուն՝ Քարքավիզ, զըմզի հըմեն կուտե:

Ստան տներ, դռներ փակին: Էտի քշեց՝ Քարքավիզ, Քարքավիզ, ռեսի դուռ կանավ:

Ռես ներսն է, չըշղմա էլնի դուս:

Ռեսն ըսեց դռան հետեւեն. - Մարթ, քու Քարքավիզի խունարն ի՞նչ է:

Ըսավ. - Իմ Քարքավիզի խունարն էն է, օր որ մեկ թակավոր վըր մեկելին կգոռե: Թողես մըջ էնոր ասքարին կը կոտորե:

Կնիկ ըսեց. - Ռես, քու բախտն եմ ընկի, չէ՞ Արմաստանա թակավոր քըզի գլաֆ* տվեր է, կիզա վըր քզի կռիվ: Առ Էտի, քզի պետք կիզա:

- Չա՛յ, մարթ, Էտ քու Քարքավիզի գին ի՞նչ է:

Ըսեց. - Չորս ոտք կապեն, դնեն կշեռք, ինչ օր քաշեց՝ ուր գինն էն է:

Չորս ոտք կապեց, էդիր կշեռք, է՛ էլ կը վերցի կշեռք, հա օսկի լից ու դառտկե: Բեռ մի օսկի քաշեց:

Ըսաց. - Մա՛րթ, ես իմա՞լ Քարքավիզ պահեմ, զըմզի կուտե:

Ըսաց. - Դու արի դուս, մի վախենա, ես կը սովորցում, Քարքավիզ քըզի չուտե: Էլի հուլիկ մի շինե, Քարքավիզ դիր մեջ, երկու ծակ թոր, մեկ ջուր լից, մեկ գարի, մեկ ջուր լից, մեկ գարի, մեկ ջուր լից, մեկ գարի, օր չէլնի մարթ ուտե: Սարթվան փոշին տար լից Քարքավիզի դռան հառեջ:

Ձէտ բեռ օսկին թալեց վըր ծիու մի, գնաց ուր տուն:

Օրերուց օր մի մնաց, թակավոր երկու խոշոր ասքար արշ էրից վըր Էտ ռեսի տուն:

Թոռ տղե մի թռավ ըսեց. - Ռես, չէ՞ դու միլոմ օսկի տվիր Քարքավիզ առար, հու՞ր է էղ:

Ըսավ. - Խազար կուռուշ կիտամ քե, գնա էդ դուռ բաց՝ Քարքավիզ թիզա մըջ ասքրին:

* Անընթեռնելի (ծ.կ.):

Էդ տղեն առավ խազար կուռուշ, դրեց ուր ծոց, լանգե մի զարկավ Քարքավիզի դուռ:

Քարքավիզ էլնվ թաթխվավ մըջ փոշուն ու զոռաց, առավ էտ ասքրի մեջ: Ամեն ասքար տեղ մի պառկեցուց, էրկու օրդուն տայամիշ չ'երավ, էնքան լարեց:

Ասքրի ջոջի անուն Դարնաբեկ էր, լարեց տարավ խանեց ծառ: Ձուր ձեռ տարավ մեջ էտոր ծիու փոր, Դարաբեկ կափըլփե, օր ուտե:

Էտ ծին շեց. Քարքավիզ իշկեց շեռ, տեսավ Դարնաբեկ ծառն է, թռավ էլավ ծառ:

Դարնաբեկն ըսավ. - Քարքավիզ, դարծի գնա, ուխտ էղնի, քանի սաղ իմ, վըր քու ռեսին չիգամ կոիվ:

Դարնաբեկ գնաց, ուր ասքար, որն թոփալ էր, որն սաղկատ էր՝ ժողվեց վըր իրարու, ըսեց. - Ձիս մըջ իմ ծիու փորեն կիշկեր, էս էլ ծառն է: Ես թրբա եմ էրիր, էլ չըմ էրթա վըր ռեսին կոիվ:

Քարքավիզ էկավ մտավ ուր հոլըկ:

Դառնանք վըր Չայուն: Էտ Չայն առավ զօսկին, զծին ու գնաց ջաղաց: Էտ ջղղըցպանին էժ մի կա, էտ Չայուն ծի մի կա:

Էտ խայու աչ ընկեր է ջաղղցպանի աչ ընկեր էր էտ խայու ծին:

Էտ ջաղղցպան ըսեց. - Է՛ծ, օր դու էժ ես՝ գնա՝ Ավագ ծով, լոկցի, թախթըփվի, էղի տաք-տաք լոշերով խորովու մի, արի ջաղաց, ես ու իմ մաաֆըր ուտենք:

Էղավ խորովու, էկավ: Կերան, կշտացան, մնաց օսկոներ՝ ժողվից:

Ըսավ. - Է՛ծ, օր էժ ես, գնա՝ Ավագ ծով, լոլկցի, թախթփվի, արի, հավալվան էժ:

Էժ կանավ դռան հետեվ:

Ըսեց. - Վուլա, էտ ծին խորոտ է խըտ իմ էծուն:

Ըսեց. - Ալդարտաշ, արի ես ու դու դնվ մի բռնենք:

Էլավ ջաղցպան պաղկվավ իրեք հետ: Դիր մի պաղկվավ, ծին ըսեց. - Տղա՛, հանդե շողտուն է:

Դիր մի պաղկվավ, ըսեց. - Չանդե՛ ալտուն է:

Դիրմ՝ էլ պաղկվավ, ըսեց. - Չանդե՛, ջաղցի նավն է:

Դորն էկավ, պտի ծիու տեր պաղկվի:

Ձին զուր տերն էրեց լու մի, կպուց զուր պինջ: Ըսավ. - Էլի՛, արի, իմ էժ քեզի, չըմ կանա զըտի:

Ձին փղընգտաց՝ քթեն պոճավ, պատավ խայ:

Ձաղցապան զաչքեր խփեց, ծիմն զետ մարթ էրեց տիզ մի, կպուց ուր պոռտ:

Պտոտեց, չպտոտեց՝ չկարավ գտեր էր: Չիմն զինք թոթվեց, պոռտեմ պոծավ, պատավ հայ:

- Դիրմ՝ էլ պաղկվի, - ըսավ:

Չիմն էրավ տիզ մի, կպուց ուր պոչի տակ:

Ըսեց. - Դո՛ր օր էս, էլի՛ արի, իմ է՛ծ քղզի:

Էլավ էտ տեղեն, առավ զծիմն ու զէծն էկավ ուր տուն:

Դոր կիշկա՝ ուր կնիկ տուն չէ:

Հիրիկուն ըսավ. - Է՛ծ, օր դու է՛ծ ես, էրթաս Ավագ ծով, լվացվիս, թախթփվիս, էղիս խորովու, գաս, ես, իմ ախարտանք ուտիմք:

Տեսան է՛ծ եղավ խորովու մի, հերդքեն թփավ տակ: Կերան, խմեցիմ ուրանց: Օսկոներ ժողվից, ըսեց. - Է՛ծ, օր դու է՛ծ ես, էրթաս Ավագ ծով, լվացվիս, թախթփվիս, էղիս է՛ծ մի, կանիս դռան հետեվ:

Էտ էրկու կնիկ ըմալ ուրախցան, ըսիմ. - Էտ մեր սիրողներուն խորոտ է:

Էտոնց սիրողներն էկան, ըսեց. - Է՛ծ, օր դու է՛ծ ես, էրթաս Ավագ ծով, լողկնաս, թախթփվիս, եղնիս խորովու մի, գաս մենք, մըր սիրողներն ուտենք:

Է՛ծ զուր պոչ թախթփեց, ըսեց. - Չը՛մ էրթա:

Անթրոց մի զարկեց, անթրոց կպավ է՛ծի ոռ, ըսավ. - Հարս, գնա, անթրոց կպու բե, թոնիր փարտենք:

Հարս գնաց, կպավ անթրոց մնաց:

Խարսի սիրող գնաց, օր զիրարու պոծու, էն էլ կպավ խարսի ոռ:

Տանտիկին էլավ ըսավ. - Քաթիմ քու տիրու մեռլիմ:

Էտ էլ կպավ էտ մարթու ոռ:

Տանտիրոջ սիրող վազեց, օր տանտիկին պոծու, էն էլ կպավ էնոր ոռ: Եղան շիրիտ մի:

Տղեկներ էկան, տեսան շիրիտ մի, էրկու օտար մարթ ու ուրանց կըքտիք: Էտ ի՞նչ դավի է:

Ձէտ անթրոցն ու է՛ծ թողիմ, զետ չորս մորթեցիմ:

Ընկան էտ հայու կնկան հետեվ, օլորտան օր քառսուն հալճի խոր փորած են, զետ կնիկ իջուցած մեջ:

Ձէտ կնիկ հանիմ խորեն: Էտ կնիկ ըսեց. - Մա՛րթ, իմ կարգվելու վախճտ չուր ի մկա էդ էրկու կընիկ ըդմալ են էրած:

Էն հասավ ուր մուրագիմ, դու էլ քոն: